


## Բազմաֆունկցիոնալ առողջարարական-վերականգնողական համալիր-կենտրոնի ստեղծման ներդրումային ծրագիր



### **Ծրագրի նկարագիրը՝**

Ծրագրով նախատեսվում է Թբիլիսյան խճուղու շրջանցիկ թունելի հատվածում ստեղծել բազմաֆունկցիոնալ առողջարարական համալիր՝ ինչպես տեղացի, այնպես էլ արտասահմանից ժամանած այցելուների համար: Այստեղ այցելուն կստանա համալիր բուժում, վերականգնողական կուրսեր, որը կգուզակցվի հանգստի հետ:

Կենտրոնի կողմից առաջարկվող ծրագրերը կունենան կանխարգելիչ կամ բուժիչ բնույթ, որոնք կիրականացվեն բժիշկների հսկողության ներքո: Յուրաքանչյուր այցելու կունենա բուժման պլան:



### **Համալիրում կնատուցվեն հետևյալ ծառայությունները՝**

- կուսմետիկ/պլաստիկ և վերականգնողական վիրաբուժություն,
- ստոմոտոլոգիական ծառայություններ, ներառյալ ատամների իմպլանտացիան և օրթոդոնտիկ բուժումը,
- դիագնոստիկ ծառայություն,
- սրտաբանական և սրտանոթային բուժում,
- աչքերի բուժում/վիրահատություն,
- օրթոպեդիկ/անոտրոպոմետրիկ կուսմետոլոգիա,
- էնդոկրինոլոգիա ,

<sup>1</sup> Նախագծում առկա նկարները տարբեր քաղաքներում գործող նմանատիպ կենտրոնների օրինակներ են:

- ուրոլոգիա/գինեկոլոգիա,
- նյարդաբանություն,
- հոգեբանություն
- սննդաբանի խորհրդատվություն և այլն:



Համալիրը կունենա հյուրանոցային համարներ, առանձնացված քոթեջներ, ինչպես նաև սրճարան, ճաշարան, առևտրի կենտրոններ: Համալիրում նախատեսվում է բացօթյա և փակ լողավազան, այգիներ, մարզվելու համար ճեմուղիներ և այլն:



Համալիրը կունենա «Call center» կապի կենտրոն, որտեղ հեռախոսային օպերատորները տարբեր լեզուներով կծանոթացնեն համալիրի ծառայություններին, իսկ համապատասխան մասնագետները կանցկացնեն նախնական խորհրդատվություն:

Օտարերկրյա այցելուների համար համալիրը կլինի գրավիչ՝ պայմանավորված հետևյալ հանգամանքներով՝

- բուժման ցածր արժեք,

- բարձրորակ բժշկական ծառայություններ,
- հարմարավետ հանգստի պայմաններ:

**Տեխնիկական  
ցուցանիշներ**

Համալիր կենտրոնի ընդհանուր մակերեսը կկազմի մինչև 2 հա:



**Ծրագրի  
ժամկետներ**

Ծրագրի իրականացման ժամկետը՝ շուրջ 3 տարի:

**Ծրագրի արժեքը**

Շուրջ 20 մլն ԱՄՆ դոլար:

**Ներդրումների  
ձևը և հիմնական  
պայմանները**

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել մասնավոր ներդրումների ներգրավմամբ:

**Ներկա  
հրավիճակ**

Առկա է հայեցակարգային նախագիծ: